Հավելված
ՀՀ կառավարության 2024 թվականի
օգոստոսի 29-ի N 1384 - Ն որոշման

ԿԱՐԳ, ԴԵՊՔԵՐ ԵՎ ՉԱՓԵՐ ՌՈՅԱԼԹԻԻ $Բ_3$ ԲԱԶԱՅԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ

1. Ռոյալթիի $Բ_3$ բազայի հաշվարկման նպատակով ֆինանսական ծախսերը նվազեցվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 6-րդ բաժնով սահմանված կարգով: Սույն կետով սահմանված ֆինանսական ծախսերը հաշվի են առնվում ամբողջությամբ, եթե՝

1) փոխառու (վարկառու, լիզինգառու) ռոյալթի վճարողի բաժնետոմսերը համարվում են ցուցակված սույն հավելվածի թիվ 1 ցանկում ներառված ֆոնդային բորսաներից որևէ մեկում, և փոխառությունը (վարկը, լիզինգը) ներգրավվում է օրենսգրքի 362-րդ հոդվածի համաձայն փոխկապակցված չհամարվող փոխատուից (վարկատուից, լիզինգատուից).

2) փոխատու (վարկատու, լիզինգատու) կազմակերպության բաժնետոմսերը համարվում են ցուցակված սույն հավելվածի թիվ 1 ցանկում ներառված ֆոնդային բորսաներից որևէ մեկում, և փոխառությունը (վարկը, լիզինգը) տրվում է օրենսգրքի 362-րդ հոդվածի համաձայն փոխկապակցված չհամարվող փոխառու (վարկառու, լիզինգառու) ռոյալթի վճարողին.

3) փոխատուն (վարկատուն, լիզինգատուն) ընդգրկված է սույն հավելվածի թիվ 2 ցանկով նախատեսված՝ միջազգային զարգացման կազմակերպությունների ցանկում.

4) ֆինանսական ծախսերը հաշվեգրվել են հրապարակային առաջարկի միջոցով հանրությանն առաջարկված կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված՝ ռոյալթի վճարողի պարտքային արժեթղթերի համար:

2. Սույն հավելվածի 1-ին կետին չհամապատասխանող ֆինանսական ծախսերը ռոյալթիի $Բ_3$ բազայի հաշվարկման նպատակով հաշվի չեն առնվում:

3. Սույն հավելվածի 1-ին կետի 1-2-րդ ենթակետերով նախատեսված դեպքերում ռոյալթիի $Բ_3$ բազայի հաշվարկման նպատակով հաշվի են առնվում այն ֆինանսական ծախսերը, որոնք հաշվեգրվել են փոխառուի (վարկառուի, լիզինգառուի) կամ փոխատուի (վարկատուի, լիզինգատուի) բաժնետոմսերի՝ ցուցակված լինելու ժամանակահատվածում:

Ց Ա Ն Կ 1
ՖՈՆԴԱՅԻՆ ԲՈՐՍԱՆԵՐԻ

	Երկիրը/միությունը	Քաղաքը	Անվանումը	MIC ծածկագիրը
1.	ԵՄ		Euronext	
			Nasdaq Nordic	
2.	Ավստրիայի Հանրապետություն	Վիեննա	Wiener Börse	XWBO
3.	Գերմանիայի Դաշնային Հանրապետություն	Բեռլին	Berliner Börse	XBER
		Դյուսելդորֆ	Börse Düsseldorf	XDUS
		Համբուրգ/Հանովեր	Hamburg Stock Exchange	XHAM/ XHAN
		Մյունխեն	Börse München	XMUN
		Շտուտգարտ	Börse Stuttgart	XSTU
		Ֆրանկֆուրտ	Frankfurt Stock Exchange	XFRA
4.	Լյուքսեմբուրգի Դքսություն	Լյուքսեմբուրգ	Luxembourg Stock Exchange	XLUX
5.	Նիդերլանդներ	Ամստերդամ	Nxchange	XNXC
		Հաագա	NPEX	NPEX
6.	Իսպանիայի Թագավորություն	Բարսելոնա	Bolsa de Valores de Barcelona	BMEX
		Բիլբաո	Bolsa de Valores de Bilbao	BMEX
		Մադրիդ	Bolsa de Madrid	BMEX
			Mercado Oficial Español de Futuros y Opciones	BMEX
		Վալենսիա	Bolsa de Valores de Valencia	BMEX
7.	Շվեդիայի Թագավորություն	Ստոկհոլմ	Nasdaq First North Growth Market	FNSE
			NGM Main Regulated	XNGM
			NGM Nordic SME	NSME
			Spotlight Stock Market	XSAT
8.	Շվեյցարիայի Համադաշնություն	Ցյուրիխ	SIX Swiss Exchange	XSWX
			BX Swiss	XBRN
9.	Միացյալ Թագավորություն	Լոնդոն	London Stock Exchange	XLON
10.	Ռուսաստանի Դաշնություն	Մոսկվա	Moscow Exchange	MISX
		Սանկտ Պետերբուրգ	Saint Petersburg Stock Exchange	SPIM
11.	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	Նյու Յորք	NASDAQ	XNAS
			New York Stock Exchange	NYSE
			NYSE Arca	NYSE Arca
		Չիկագո	Chicago Stock Exchange	CHX

			CBOE Stock Exchange	CBOE
12.	Կանադա	Տորոնտո	Canadian Securities Exchange	CSE
		Մոնրեալ	Montreal Exchange	MX
		Տորոնտո	Toronto Stock Exchange	TSX
13.	Հայաստանի Հանրապետություն	Երևան	Armenia Securities Exchange	AMX
14.	Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն	Պեկին	Beijing Stock Exchange	BJSE
		Շանհայ	Shanghai Stock Exchange	XSHG
		Շենժեն	Shenzhen Stock Exchange	XSHE
15.	Ճապոնիա	Տոկիո	Tokyo Stock Exchange	XJPX
16.	Սինգապուրի Հանրապետություն	Սինգապուր	Singapore Exchange	XSES
17.	Կատարի Պետություն	Դոհա	Doha Securities Market	DSMD
18.	Արաբական Միացյալ Էմիրություններ	Աբու Դաբի	Abu Dhabi Securities Market	XADS
		Դուբայ	NASDAQ Dubai	DIFX

ՑԱՆԿ 2

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. Առևտրի և զարգացման սևծովյան բանկ (Black Sea Trade and Development Bank)
2. Ասիական զարգացման բանկ (Asian Development Bank)
3. Ավստրիական զարգացման գործակալություն (Austrian Development Agency)
4. Գերմանական զարգացման բանկի խումբ (KfW Banken gruppe)
5. Գերմանիայի միջազգային համագործակցության կազմակերպություն (Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit)
6. Դանիայի միջազգային զարգացման գործակալություն (Danish International Development Agency)
7. Զարգացման և համագործակցության շվեյցարական գործակալություն (Swiss Agency for Development and Cooperation)
8. Իսպանական միջազգային համագործակցության գործակալություն (Spanish Agency for International Cooperation)
9. Իտալական զարգացման և համագործակցության ծրագիր (Italian Development Cooperation Programme)
10. Կանադայի միջազգային զարգացման գործակալություն (Canadian International Development Agency)
11. Համաշխարհային բանկի խումբ (World Bank Group)
12. Ճապոնիայի միջազգային զարգացման գործակալություն (Japan International Cooperation Agency)
13. Միավորված Թագավորության միջազգային զարգացման վարչություն (Department for International Development)
14. Միջազգային ամերիկյան զարգացման բանկ (Inter-American Development Bank)
15. Միջազգային ֆինանսական կորպորացիա (International Finance Corporation)
16. Միջազգային համագործակցության ճապոնական բանկ (Japan Bank for International Cooperation)
17. Ներդրումային եվրոպական բանկ (European Investment Bank)
18. Ներդրումների խթանման գործակալությունների համաշխարհային կազմակերպություն (World Assocation of Investment Promotion Agencies)
19. Շվեդական միջազգային զարգացման և համագործակցության գործակալություն (Swedish International Development Cooperation Agency)
20. Սևծովյան տնտեսական համագործակցություն (Organization of the Black Sea Economic Cooperation)
21. Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ (European Bank for Reconstruction and Development)
22. Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ (International Bank for Reconstruction and Development)
23. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն (Organisation for Economic Cooperation and Development)

24. ՕՊԵԿ-ի միջազգային զարգացման հիմնադրամ (Organizatiom of Petroleum-Exporting Countries)

25. Ֆրանսիական զարգացման գործակալություն (French Development Agency)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ